



ԱՄԵՆՍՑՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԾՐՈՋԸ ՓՐԿՉԻ ՀՐԱԺԱՄԱՆ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

(29 մարտի 1959 թ.)

Ուրբ Հարության ավետիսը վերստին կոգեշնչն մեզ բոլորս, և համայնքի քրիստոնյա աշխարհի նետ միասին, անիվ և խնդրաբամբ, կերպենք փառքը աշխարհասասան հրաշքին՝

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՆ Ի ՄԵՌԵԼՈՅՑ, ՄԱՀՈՒԱՄԲ ԶՄԱՆ ԿՈԽԵԱՅՑ, ԵՒ ՅԱՌՈՒԹԵԱՄԲՆ ԻՒՐՈՎ ՄԵԶ ԶԿԵԱՆՍ ՊԱՐԳԵԼԵԱՅՑ»:

Տարակուանենք և ստուգության միջև տարութեղվող ու խարիսխող մարդկության, հարուցյալ Փրկչի իշման Ս. Տաճարեն, Մենք ևս կրերենք լույսը հարության, հույսը հոգվող փրկության և վկայությունը կյանքի հաղթարքության:

Երկու հազար տարիներ առաջ, հրաշքի առաջաւ մը, եր արեի լույսի նետ «առաջին լույսը» կիցներ աշխարհի վրա, նախախնամության իսկ ձեռքով հակվեցան կապանեները նյութին, և Հիսուս, Որդին Մարդու, մանված գերեզմանեն հարությամբ վերստին ծնալ, հավետ պայծառացնելով մարդկային կյանքի մրագնած երկինքը: Եվ անհմանալի երաշքը դարձալ ստուգություն, զԱստված փետոռող մարդու համար, իրեւ լրումը իր ամենասուրբ սպասումին:

Հուսացյալ հարազաներ Մեր, դատարկ Քրիստոսի գերեզմանը, «զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս, չէ աստ, այլ յարեաւ (Ղոկ. ԽԴ 8):

Մենք կհավատանք Քրիստոսի հարության՝ իրեւ աստվածային գերբնական եղբարտության:

Մենք կհավատանք Քրիստոսի հարության՝ իրեւ նուսա ապավեն և առնավագաշյա նոզիներու փրկության:

Մենք կհավատանք Քրիստոսի հարության՝ իրեւ վեմ՝ սիր և խաղաղության Ավետարանին, ու բարի և արդար գործոց հաղթանակին:

Ճշմարտապես «յարեաւ Քրիստոս ի մեռելոց»:

Ուեմն՝ «Ո՞ւ է մահ յաղբօւրին բու. ո՞ւ է դժոխի խայբոց բու» (Ա. Կորնք. Ճե 55):

Եվ իրով, քրիստոնյա մարդկության ոգեկան կյանքի երկու հազար տարիներու պատմական փորձը, իր բոլոր իրավ երաշալիքներով, արդյոք ամենավերական ապացույցը չէ՝ հարության ստուգության:

Հոյեն ծնած ու արեով անած մարդը, իր նոզեկան ուժերով, կրածրանա նյութի մակարդակն վեր, ինչպես ծաղիկը դեպի լույս, ինչպես երազը դեպի կապույտը երկնքին, և զնծությամբ կերգե փառքը հարության և հավիտենական կյանքին:

Արդ, սիրու առե՛ք և ուրախ եղե՛ք, հավատացյալ որդիք Մեր, և հավատացե՛ք Ս. Հարության շնորհեներուն, հավատացե՛ք նրա մարդության լույսին, հավատացե՛ք Արդարության Արեգակին, հավատացե՛ք բարիին

ու խաղաղության ուժերուն, «զի Աստուած լոյս է» (Ա. Յովի, Ա. Յ), զի «Աստուած սէր է» (Ա. Յովի, Դ. 9), զի Աստուած արքայությունը «արդարութիւն է և խաղաղութիւն և խնդրութիւն ի Հոգին Սուրբ (Հռոմ. ԺԴ 17):

Ո՞վ աստվածասեր զավակներ հայ ժողովրդյան, որ ի Հայաստան աշխարհ և որ ի սփյուս աշխարհի ցրված, այսօր Հայոց Հայրապետը, Քրիստոսի Հարության մեծ ավետիսով, ձեզ կրերե հայրական սիրո ողջոյն և հայրապետական օրինություն, ամենայն հայոց Մայր Արքու Ս. էջմիածնեն:

Մեր ավետիսը քող ձեզ բոլորդ զտեն զվարերես և արքուն, սիրով միաբան, սուրբ և առամինի, միշտ պատրաստ ի գործ բարիս:

Թող Հարության լույսը ձեր հոգիներեն ներս բափանցե և պայծառացնե ձեր մեջ մեծ Հոյսը, ինչպիս արեր, հայրական ու կենարար, կշռա եյութական աշխարհին ու տիեզերին մեջ:

Թող ձեր կյանքի համրուն բարին շատեա և դում «սրբեցէ ի բաց զիին խմորն՝ զի եղիշիք նոր զանգուած, որպէս էդդ անխմորն, բանզի Զատիկ մեր զինաւ Քրիստոս» (Ա. Կորեք. Ե 7):

Եվ Վերշապես, Հարության շնորհներով զեղուն սա օրերուն, մանավանդ դում, պանդուխտ զավակներ Մեր, գիտցես ձեր հոգեվոր կյանքի, ձեր եկեղեցին վերաշինել ու շենցնել՝ հաշտությամբ, միասնությամբ ու ներին խաղաղությամբ:

Թող ամբողջ ու անխոռվ մնա հայոց սուրբ հերայրությունը ի Քրիստոս:

Եվ քող խապան հեռանան մեր Ս. Եկեղեցվո ու Ազգի կյանքի սահմաններեն ամեն հերձում, ամեն անշատում: Ոչ ո՞ւ քող շմածե բաղաքական պայմանավորումներ պարտադրել եկեղեցական կյանքին:

Անշափելի պիտի ըլլան ավերիչ հետեւանքները ուղեկորուս այն գործելակերպին, որ ծայր տված է Սփյուռիքի որոշ հայ համայնքներու ծոցին մեջ, բոլորովին արվեստական, բոլորովին անհիմն և անհարազատ կերպով:

Մենք շենք տեսներ ու շենք հասկնար, քե ինչ շահ ունին Հայ եկեղեցին և հայ ժողովրդը այդ բներացքնեն: Ստույգ է, քե ինչ որ Ս. էջմիածնեն հափշտակվի ու բաժանվի՝ այդ բացարձակ կորուստ է մեզ բոլորին համար, համայն հայության համար անխտիր:

Զգո՞ւշ, զգո՞ւշ: Անցյալը հիշեցե՞մ և հեռուն նայեցե՞մ: Մի մոռնամ, որ Ս. էջմիածնեն

է այստեղ: Հայ ժողովուրդն է այստեղ: Հայաստանն է այստեղ: Այստեղ ամեն ինչ սուրբ է: Այստեղ ամեն ինչ հավերժական է: Երեխաները մե՛րն են այստեղ:

Այս Ս. Զատիկի օրով, երբ Ս. էջմիածնի զանգակները Հարության ավետիսը կուտան, և ցեծազին կինչեցնեն սիրո ու խաղաղության ձայնը, Մենք անգամ մը ևս կվերանորգունքն Մեր իղձը և Մեր մաղրանը՝ համերաշխության և միասնության, մեր Ս. Եկեղեցը կանոններու և ավանդությանց լույսին տակ, մեր նվիրապետական Արքուներու պատմական իրավասությանց հիման վրա:

Թա՛ց աշխերդ, ո՞վ ժողովուրդ հայոց և ծանի՛ր գեղեց: Դուն մահկանացու շնու: Դուն հավես անբաժան, կենդանի ես ու կենդանի պիտի մնաս, «Քանզի ընդ շնորհօֆ Մերոյ Յարութեան», քու հոգիիդ մեջ կան ու կանին հավատքը, նոյնու և սերը, և քու զավակներդ, շնորհներով զեղուն, այսօր վերստին կկերտեն նոր լուսարաց մը կյանքի:

Զի երե ամեն զարուն աշխարհին կրերե նոր կյանք, նոր բնձուուղում և նոր զարունք, նոյնապես և ամեն Զատիկ մեզ կրերե մեծ ավետիսը՝ մեր խաչված Ազգի հարության: Այս, դատարկ է այսօր մահվան զերեզմանը նաև հայ ժողովուրդին, որ մահք մահով հաղթելով, կապրի, կշինե ու կստեղծագործի իր իսկ Մայրենի սուրբ հողին վրա՝ նոր հոնինարով, նոր Երգերով ու նոր փառնով:

Արեւ և լո՞յս և ճանապա՞րհ և օրենուրյուն հայ ժողովուրդին:

Թող մեզ ապավեն ու պահապան ըլլանարույցալ Փրկչի շղողաքը լույսով կառուցված Տանարն այս լուսեղեն՝ հոգեծին Մայրը մեր, Մրգագնասուր էջմիածնին, «յորուն և դում ընդ հմին շինին ի բնակութիւն Աստուծոյ Հոգով» (Ծիես. Բ 22):

Սիրեցյալ և հարազատ զավակներ Մեր, Ս. Հուրության շնորհարաշի ավետիսով և Ս. էջմիածնի անմար լույսով, հայրական սիրով կօրհնենք զձեզ բոլորդ, բոլորդ անխափը, շնորհազորելով ձեր Զատիկը: Եվ իշման Ս. Սեղանի առաջ ջերմագին եռանդով կաղորինքն ձեր բոլորիդ կյանքի արեշատության ու երշանկության համար, մեր Ս. Եկեղեցվո անսասանության և միության համար, մեր նվիրական Մայր Հայրենիքի, Հայաստան աշխարհի ծալկման ու բարօրության համար, համայն աշխարհի խաղաղությամբ:

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՌԻ Ի ՄԵՌԵԼՈՅ»:

Շնորհի ընդ ձեզ ամեն:

